

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/5

1 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Յուրա և Գագիկ» ՍՊԸ 31.07.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ ՕՀՎ 07.07.2015 թ-ի թիվ 5103942 ակտի դեմ:

«Յուրա և Գագիկ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

ՀՀ Ֆինանսների նախարարի 12.06.2015թ. թիվ 5103942 հանձնարարագրի հիման վրա «Յուրա և Գագիկ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում, որի արդյունքում 07.07.2015թ. կազմվել է թիվ 5103942 ստուգման ակտը:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11 թդ հոդվածի 2-րդ կետով ներկայացվում է բողոք վերոհիշյալ ակտի 2-րդ կետի դեմ:

Ակտի 2-րդ կետով արձանագրվել է. «Յուրա և Գագիկ» ՍՊԸ-ն ք.Երևան, Գյուլիքեխյան 1/3 հասցեում 2015թ. ի մայիս և հունիս ամիսներին իրականացրել է ատամնատեխնիկական գործունեություն թվով 6 /վեց/ աշխատատեղով, սակայն ընկերությունը վճարել է արտոնագրային վճար և ստացել արտոնագիր 1 /մեկ/ աշխատատեղով գործունեություն իրականացնելու համար: Համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9 թդ հոդվածի 6-րդ կետի սույն օրենքի անբաժանելի մաս կազմող թիվ 7 հավելվածում նշված գործունեության տեսակների մասով գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի արտոնագրում նշված արտոնագրային վճարի ելակետային տվյալի մեծությունը հարկային մարմնի կողմից արձանագրված ելակետային տվյալի մեծությունից պակաս լինելու և օրենքի անբաժանելի մաս համարվող թիվ 8 հավելվածի 14-րդ կետով սահմանված համապատասխան գործակիցներից ցածր գործակիցներ կիրառելու դեպքում արտոնագրային վճար վճարողից գանձվում են տվյալ ժամանակահատվածի համար պակաս վճարված արտոնագրային վճարը 456000 դրամի չափով ...: Ընդամենը ենթակա է լրացուցիչ վճարման 765510 դրամ /456000 + 228000 + 45600 + 35910 դրամ/»:

Ընկերությունը գտնում է, որ ստուգման ակտը կազմվել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 27.02.2013 թ-ի թիվ 5 պաշտոնական պարզաբանման ՀՀ առողջապահության նախարարի 2011 թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 25-Ն հրամանով ատամնատեխնիկական ծառայությունների մատուցման ընթացքում ատամնատեխնիկի 1 հիմնական աշխատատեղ կարող է համարվել 1 ատամնատեխնիկի և գիպսային մոդելների ստացման, զրոյման, պոլիմերացման, փայլեցման, ձուլման աշխատանքներ կատարող մինչև 2 օժանդակ /տեխնիկական/ աշխատակիցների աշխատատեղերի ամբողջությունը:

Ստուգող ՕՀՎ օպերիվագործների կողմից խախտվել է ինչպես վերը նշված օրենքների, այնպես էլ ՀՀ առողջապահության նախարարի 27.02.2013 թ-ի թիվ 5 պաշտոնական պարզաբանման պահանջները:

Թիվ 5103942 ստուգման ակտի 2-րդ կետում արձանագրվել է, որ «Յուրա և Գագիկ» ՍՊԸ-ն 2015 թ-ի մայիս և հունիս ամիսներին իրականացրել է ատամնատեխնիկական գործունեություն թվով 6 աշխատատեղով, սակայն ընկերությունը վճարել է արտոնագրային վճար և ստացել արտոնագիր 1 աշխատատեղով գործունեություն իրականացնելու համար: Այսինքն, համաձայն ակտի 5 աշխատատեղ պակաս է ներկայացվել: Ակտի անբաժանելի մաս կազմող 24.06.2015թ. արձանագրության համաձայն 9 վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը գործատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չի եղել:

Արձանագրելով այդ փաստը չի հիմնավորվել, թե ինչ հիմքով է հաշվարկվել արտոնագրային վճարի չափերը, որի արդյունքում արտոնագրային վճարի գծով առաջադրված պարտավորությունները հաշվարկվել են օրենքի խախտումներով:

Այսպես, թիվ 5103942 ստուգման ակտի անբաժանելի մաս հանդիսացող արձանագրության մեջ նշվել է, որ Արման Հարությունյանը և Էդգար Զարդարյանը հանդիսացել են ատամնատեխնիկներ: Իրականում նրանք երկուսն էլ հանդիսացել են օրենքով սահմանված կարգով գրանցված Հայկ Աբրահամյանի օժանդակ /տեխնիկական աշխատողներ 1 հիմնական աշխատատեղով/, որի վերաբերյալ տվել են իրենց գրավոր հայտարարությունները: Գարեգին Այվազյանը և Սարգիս Փաշոյանը հանդիսացել են օրենքով սահմանված կարգով գրանցված բժիշկ-ստոմատոլոգ Յուրա Հարությունյանի մոտ որպես պրակտիկանտներ և չէին կարող հանդիսանալ որպես 1 առանձին աշխատատեղի ամբողջություն: Միայն Հարություն Բաղմանյանն է հանդիսացել ատամնատեխնիկ, որի վերաբերյալ տվել է գրավոր հայտարարություն և օժանդակ գործառույթներ իրականացնող Արտակ Առաքելյանի հետ առանց գրավոր պայմանագրի 1 /մեկ/ աշխատատեղով իրականացրել է ատամնատեխնիկական գործունեություն:

Այսպիսով հաստատված է համարվում, որ Ընկերությունը ոչ թե 6 /վեց/, այլ 2 /երկու/ աշխատատեղով է ատամնատեխնիկական գործունեություն իրականացրել, սակայն արտոնագիր է ստացել 1 աշխատատեղի համար:

Մինչդեռ, ակտի անբաժանելի մաս կազմող արձանագրության մեջ արձանագրելով 1 բժշկի /Կարեն Գալստյանը/, 1 ատամնատեխնիկի /Արման Հարությունյանի, որն հանդիսացել է գրանցված ատամնատեխնիկ Հայկ Աբրահամյանի օժանդակ /տեխնիկական/ աշխատող/ և 2 բուժքույրերի օրենքով սահմանված կարգով չձևակերպելու փաստը, մնացած 5 չձևակերպված աշխատողներին համարել են որպես առանձին աշխատատեղերի ամբողջություն:

Անտեսելով օրենքի պահանջները, ստուգման ակտով չի հիմնավորվել, թե որ փաստական հանգամանքներն է հիմք ընդունել վարչական մարմինը ակտը կազմելուց, ինչ հիմքով է հաշվարկել արտոնագրային վճարի չափերը, ինչ ելակետային տվյալներ են հիմք ընդունվել արտոնագրային վճարի պարտավորություններն առաջադրելիս, հղում չի կատարվել համապատասխան օրենքի կամ օրենքով նախատեսված դեպքերում նաև այլ իրավական ակտերի վրա, չի կատարվել ՀՀ առողջապահության նախարարի 27.02.2013թ. թիվ 5 պաշտոնական պարզաբանման պահանջները:

Չի պահպանվել նաև ՀՀ -կառավարության 25.07.2013թ. թիվ 1259-Ն որոշման հավելված 1 կարգի 4-րդ կետի 3 ենթակետի պահանջները՝ ստուգում իրականացնող անձինք չեն իրականացրել փաստաթղթերի ուսումնասիրություն, գործատուից բացատրություններ չեն վերցրել պարզելու ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած անձանց աշխատանքային պարտականությունների բնույթը, ինչը հանգեցրել է սխալ հետևությունների: Հետևաբար ակնհայտ է, որ հարկային մարմնի 07.07.2015 թ-ի թիվ 5103942 ստուգման ակտի 2-րդ կետով արձանագրվածն անհիմն է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով և «Վարչարարության

հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-70-րդ հոդվածներով ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ ՕԿՎ 07.07.2015թ. թիվ 5103942 ստուգման ակտի 2-րդ կետը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 12.06.2015 թ-ի թիվ 5103942 հանձնարարագրի համաձայն «Յուրա և Գագիկ» ՍՊԸ-ում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՕԿՎ 07.07.2015 թ-ի թիվ 5103942 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 3465510 դրամ:

Ընկերության բողոքը վերաբերվում է Ակտի 2-րդ կետով արձանագրված խախտման համար լրացուցիչ առաջադրված պարտավորությանը:

Ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ «Յուրա և Գագիկ» ՍՊԸ-ն ք.Երևան, Գյուլիքեխվյան 1/3 հասցեում 2015 թ-ի մայիս և հունիս ամիսներին իրականացրել է ատամնատեխնիկական գործունեություն թվով 6 (վեց) աշխատատեղով, սակայն ընկերությունը վճարել է արտոնագրային վճար և ստացել արտոնագիր 1 (մեկ) աշխատատեղով գործունեություն իրականացնելու համար: Համաձայն «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ կետի՝ սույն օրենքի անբաժանելի մաս համարվող թիվ 7 հավելվածում նշված գործունեության տեսակների մասով գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի արտոնագրում նշված արտոնագրային վճարի ելակետային տվյալի մեծությունը հարկային մարմնի կողմից արձանագրված ելակետային տվյալի մեծությունից պակաս լինելու և օրենքի անբաժանելի մաս համարվող թիվ 8 հավելվածի 14-րդ կետով սահմանված համապատասխան գործակիցներից ցածր գործակիցներ կիրառելու դեպքերում արտոնագրային վճար վճարողից գանձվում են տվյալ ժամանակահատվածի համար պակաս վճարված արտոնագրային վճարը՝ 456000 դրամի չափով ((2 X 80000դր. + 3 X 48000դր.) X 2 ամիս X 0.75 ուղղ. գործ.) և տուգանք՝ պակաս վճարված արտոնագրային վճարի 50%-ի չափով՝ 228000 դրամ:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների դրույթները արտոնագրային վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 765510 դրամ (456000դր. + 228000դր. + 45600դր. + 35910 դր.):

Տվյալ դեպքում ընկերությունը պնդում է, որ խախտվել են «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հավելվածի 13-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջները, որի համաձայն արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող ելակետային տվյալներն են ատամնատեխնիկական գործունեության համար ատամնատեխնիկական ծառայությունների մատուցման աշխատատեղերի թիվը, ինչպես նաև՝ ՀՀ առողջապահության նախարարի 27.02.2013 թ-ի թիվ 5 պաշտոնական պարզաբանման պահանջները, որի համաձայն ատամնատեխնիկական ծառայությունների մատուցման ընթացքում ատամնատեխնիկի 1 հիմնական աշխատատեղ կարող է համարվել 1 ատամնատեխնիկի և գիպսային մոդելների ստացման, զրոման, պոլիմերացման, փայլեցման, ձուլման աշխատանքներ կատարող

մինչև 2 օժանդակ աշխատակիցների աշխատատեղերի ամբողջությունը: Մասնավորապես, ընկերությունն ատամնատեխնիկական գործունեությունն իրականացրել է ոչ թե թվով 6 (վեց), այլ՝ 2 (երկու) աշխատատեղով, իսկ թվով 4 (չորս) աշխատակիցները հանդիսացել են օժանդակ (տեխնիկական) աշխատակիցներ:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ ընկերության վերոգրյալ պնդումները հիմնավոր չեն, հետևյալ պատճառաբանությամբ:

Ստուգումն իրականացնող անձինք ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի բ) կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշման պահանջներով, ստուգման ընթացքում՝ 25.06.2015 թ-ին, ընկերության տնօրենից վերցրել են գրավոր հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն), որում մասնավորապես նշվել է, որ 2009 թ-ից ընկերությունում ատամնաբուժական գործունեության հետ համատեղ իրականացվել է ատամնատեխնիկական գործունեություն թվով 1 աշխատատեղով: Հայտարարությունում նշված է նաև, որ սույն թվականի մայիսի 1-ից աշխատողների թվաքանակը (ատամնատեխնիկների, քույրերի, ատամնաբուժների) աճել է և ընդհանուր թիվը կազմել է 23 (քսան երեք), որի արդյունքում ավելացվել է թվով 5 (հինգ) ատամնատեխնիկի, 2 (երկու) բժիշկի և 2 (երկու) բուժքույրի աշխատատեղ:

Ըստ Հայտարարության, նշված թվով 9 (իննը) աշխատակիցների հետ, որոնք ընդունվել են աշխատանքի սույն թվականի մայիսի 1-ից, չեն կնքվել աշխատանքային պայմանագրեր և նրանք օրենքով սահմանված կարգով գրանցված չեն:

Վերոգրյալից հետևում է, որ բողոքում բերված պնդումներն՝ ընկերությունը ատամնատեխնիկական գործունեությունը ոչ թե թվով 6 (վեց), այլ՝ 2 (երկու) աշխատատեղով իրականացնելու վերաբերյալ, հիմնավոր չեն և չեն համապատասխանում իրականությանը:

Իր հերթին, Ընկերության տնօրենից Հայտարարություն վերցնելու հանգամանքը վկայում է այն մասին, որ բողոքում բերված պնդումները ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշման Հավելված 1-ի 4-րդ կետի պահանջները խախտվելու վերաբերյալ, այն է՝ ստուգում իրականացնող անձինք գործատուից բացատրություններ չեն վերցրել պարզելու ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած անձանց աշխատանքային պարտականությունների բնույթը, ինչը հանգեցրել է սխալ հետևությունների, ևս հիմնավոր չեն:

Այսպիսով Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործում առկա ապացույցները հիմնավորում են Ակտի 2-րդ կետում նկարագրված խախտումը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմված լինելու հանգամանքը:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ ՕՀՎ 07.07.2015 թ-ի թիվ 5103942 ակտը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ